

# ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՀՈՐ ԴԵՊԵՐԸ

ՂԱԶԱՐՈՍ ՍՂԱՑԵԱՆՑԻ

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

### VII

1871 թւականի ամառն էր: Աւետիք Բաբայեանցը Թիֆլիսութեան սպասում էր ինձ: Այստեղից Փուրգոն նստեցինք ճանապահներ դէպի Ալէքսանդրապոլ Կոջորի ճանապարհով: Մանգլիս որ հասանք, գնացինք այցելութեան Գ. Արծրունուն, որ եկել էր այդտեղ ամարանց: Արծրունին «Մշակի» հրատարակութեան թոյլտութիւնն ստացել էր արդէն և այդտեղ յօդւածներ էր պատրաստում: Նատ ուրախացաւ և ասաց.—Լաւ էր որ ինքներդ եկաք, ես նամակ պիտի գրէի երկուսիդ էլ, որ աշխատակցէք «Մշակին»: Իսկ ձեզ վրայ, պարոն Աղայեանց, առանձին յոյս ունեմ: «Մշակ»-ի վիպական բաժնի համար ձեզանից յարմարագոյնը չունեմ ի նկատի:

— Ամենայն ուրախութեամբ, ասացի, կաշխատեմ ազատ ժամերս «Մշակ»-իդ նւիրել:

Ալէքսանդրապոլ որ հասանք, իջանք Աւետիքենց տունը. այնպէս թւաց ինձ, թէ մեր տանն եմ: Հայրը հօրս նման, մայրս էլ մօրըս նման, ի հարկէ բնաւորութեամբ և ոչ դէմքով: Կեր ու խումը չէր

1) Տես «Մուկ» 1893 թ. № 4, 5, 6, 7-8, 9, 10 և 11.

դադարում ոչ մի բոպէ և աւելի լայն ծաւալ ունէր և աւելի ճոխ, քան թէ մեր տանը ևս աւելորդ եմ համարում այս տան նկարագրութիւնն անել, քանի որ այդ արել է արդէն նոյն տան դուստրիմ պատւական աշակերտուհիս՝ տիկին Տիրուհի Կոստանեանցը, որ այդ ժամանակ հազիւ հինգ կամ վեց տարեկան կը լինէր:

Ալէքսանդրապոլն այդ ժամանակ մի աստիճան բարձր էր կանգնած Սխալցխայից թէ մտաւորապէս և թէ նիւթապէս Հին դըպրոցները նորոգելու և բարեկարգելու յարմար առիթներ միմեանց վրայ եկան: Իշխան Ղահրաման Երկայնաբազուկ Արզութեանցը քառասուն հազար մանէթ կտակեց, որով և հիմնեց իր անունը կրող նոյն տեղի օրիորդաց դպրոցը: Յաջորդը նշանակւեց հայր Աղափիրեանցը, որ համալսարան էր տեսել, զիտութեան հետ առել էր և լեզուների ճաշակ: Տեսչութեան պաշտօնով հրաւիրել էր Սարգիս Բէգնազարեանցը, որ մեր հողում առաջին անգամ ոտք դնող մասնագէտ մանկավարժն էր: Բժիշկ Գարբիկը Յովհաննիսեանի (Քաջբերունու) ծառայութիւնը փոխադրւել էր Ալէքսանդրապոլ: Կային և ուրիշ ինստելիդէնտ մարդիկ թէ տեղացի և թէ օտարական: Սակայն այդ բոլորը միասին առած՝ ոչինչ չէինք կարող անել առանց Աւետիք Բարայեանցի աջակցութեան: Ասեմ ահա թէ ինչու համար: Աղայութիւնն այստեղ էլ, ինչպէս և Սխալցխայում, իշխում էր ժողովրդի վրայ: Դրանց ձեռւքումն էին գանուում թէ եկաղեցիքը և թէ դպրոցները իրանց արդիւնքներով, որոնք կուլ էին գնում մի անյատակ լճի մէջ: Աղաներին կարողացել էր ձեռքն առնել Տէր-Յովիքի Կոստանեանցը և գառնալ մի անհաշիւ և անսահման իշխան: Սրա դիկտատորութեան ժամանակ վարժապետներն էլ միենոյն խալիքաներն էին, ինչ որ Սխալցխայում, բոլորն էլ իր տան սպասաւորներն էին: Սրանք ազաների որդոցը քիչ թէ շատ հայերէն էին սովորեցնում և երես տալիս, իսկ ժողովրդի զաւակներին անխնայ պատժելով՝ փախցնում ուսումնարանից: Երեխանցը ներս էին անում գոմանման մի մատթ շէնքի մէջ և մինչև երեկոյ պահում առանց դասամիջոցի: Այսպէս էր ուսումնարանի վիճակը մինչև Բէգնազարեանցի գնալը: Հին դպրոցն այս վիճակից հանելու և նոր կերպարանք տալու համար հարկաւոր էր Տէր-Յովսէփի ուժին գերակշռող և նրան տիրելի և յարգելի մի նոր ոյժ: Այս բախտին արժանացաւ ահա Ա.

Բարայեանցը, իբրև աղայի որդի, բայց բարոյապէս և մտաւոր զարգացմամբ ժողովրդական:

Դեռ ուսումը չըսկած՝ Աւետիքը մի ժողով կազմեց հոգաբարձուներից և այն միտքը յայտնեց թէ Բէջնազարեանցին և Սղայեանցին պէտք է միմեանցից անկախ կացուցանենք, պէտք է տղայոց դըպրոցը յանձնել Բէջնազարեանցին, իսկ օրիորդացը՝ Աղայեանցին: Այսպէս էլ արին: Դպրոցների տեսչութիւնը իրարից բաժանելով՝ ուսուցչական ժողովները չըրաժանեցինք: Ժողովները խառն՝ էին լինում և երբեմն շատ աղմկալից: Վիճում էինք միայն ես և Բէջնազարեանցը, միւսները միայն ականջ էին դնում, և երբ հարկ էր լինում ձայն հաւաքել, դուրս էր գալիս մի կատակերգութիւն, որովհետեւ ձայն տւող վարժապետները կամ ինձ էին ուզում հաճոյանալ կամ Բէջնազարեանցին, չէին ըմբռնում խնդրի հութիւնը: Այս միայն սկզբումն էր, երբ ուզում էինք հին խալիքաներից նորակիրթուսուցիչներ շինել, բայց հետզհետէ ուսուցչական կազմութիւնը լաւացաւ և մեր մէջ տիրեց կատարեալ ներդաշնակութիւնն ուր ուսուցիչներն էին Հայրապետ Ղուկասեանց, որ տասը տարուց աւելի ծառայեց Ալէքսանդրապոլի երկու սեռի դպրոցներին ամենայն ուսկութեամբ, բժիշկ Գաբրիէլ Յովհաննիսեանց, որ յետոց տեսուչ էլ եղաւ, Աւետիք Եղեկեանց, Հայկ Մատակեանց և այլք: Երկու խմբի յարաբերութիւնը այնքան սերտացաւ, որ միացեալ ուժով բաց արինք էլի մէկ նոր ուսումնարան օրիորդաց համար Սահականուշեան անունով, ուր ձրի էինք դասախոսում ամենքս էլ: Ամբողջ Կովկասում ոչ մի դպրոց չըկար, որ Ալէքսանդրապոլի դպրոցների բարեկարգութիւնն ունենար: Մանկավարժական ամեն տեսակ խընդիրներ այդտեղ սկսեցին մշակւել, ամեն տեսակ յօդւածներ այդտեղ սկսեցին գրւել, մանկավարժական ամեն մի խելացի պահանջ, որ միայն գրքերումն էին, այստեղ իրագործութիւն էին ստանում:

Մասնաւորապէս գալով ինձ, պէտք է ասեմ, որ իմ գործունէութիւնը՝ թէ գրական և թէ ուսուցչական՝ այստեղ իմ սպասածից աւելի բեղմնաւոր եղաւ: Ղինելով ըստ ամենայնի անկախ, գործում էի իմ ուզածի պէս և ուրիշներին էլ վարակում իմ օրինակով: Այստեղ սկսեցի մշակել իմ նորագոյն մեթոդը, թէ ինչպէս պէտք է ուսուցանել մայրենի լեզուն: Նախ ցոյց ուղարկով՝

դասաւանդութեամբ, և յետոյ՝ խմբի ցանկութեամբ՝ գրեցի և հրահանդը, թէ ինչպէս պէտք է ուսուցանել, յետոյ էլ կազմեցի դասագիրքը։ Առաջին անգամ մեր գրերը ես լուծեցի արմատական տարրերի և գրել արւի տակառվ։ Այստեղ առաջին անգամ ես դաս տըւի մի ծխական գալրոցում «Բացատրութիւն բնութեան երկոյթների» և «Տարրական ֆիզիկա», ըստ Կրիւդէրի։ Այս երկու աշխատութիւններն էլ ես թարգմանեցի, որոնցից մէկը արւեց «Արարատում», որից արտասպառեց յօդուտ Սահականուշեան ուսումնարանի, միւսը՝ ֆիզիկա՝ տպագրւեց «Պետերբուրգի հայ ուսանողների հաշուով։ Այսող գրեցի բազմաթիւ յօդածներ թէ մանկավարժական և թէ քննադասական։ Այստեղ գրեցի և Հայկական հնիւնների մասին, որով Այւազովսկուն գրգուեցի իմ դէմ, ինչպէս և Պալասանեանին՝ սրա «Մայրենի լեզուի քերականութիւնը» քննադատելուս համար։ Այստեղ գրեցի և իմ «Երկու քոյրը», որի մասին պէտք է մի քանի խօսք ասել այսաեղ և մէկ մուլթ մնացած խնդիր պարզել ժամանակակից նոր սերնդի համար, որ երբեմն միայն ձայնն է լսում, բայց չըգիտէ որտեղից է փշւում։

Քիչ առաջ ասացի, թէ Գ. Արծրունին խնդրեց, որ աշխատակցեմ «Մշակումն», և ես էլ խօսք տըւի։ Նոյն տարւայ վերջերին մի նամակ էլ Պալասանեանից ստացայ, որ գրել էր խմբագրութեան կողմից և յիշեցնում էր իմ խստում։ Այս նամակը որ ստացայ, ես շատ զբաղւած էի և պատրաստի էլ ոչինչ չունէի։ Զեւաց մի առակ գրեցի զարարաղի բարբառով, խոստանալով՝ որ շուտով մի վէպ կուզարկեմ իրանց։ Առակը ապւեց «Մշակում» սկզբի՝ կարծեմ եօթներորդ համարում Փրէցուն ստորագրութեամբ։ Առակը մի արջի պատմութիւն է։ Աստուած ուզում է Արջին մարդ շինել, միայն Դիզակեցի, բայց արջը չի համաձայնուում, ասում է՝ եթէ այլպէս ես ուզում, ես աւելի լաւ կը համարեմ արջ ֆնալ։ Սրանից յետոյ ահա ես անմիջապէս գրեցի «Երկու քոյրը» մի շաբաթւայ մէջ և ուզարկեցի Պ. Սիմէօնեանցին, խնդրելով, որ սրբագրութիւնը նա տեսնէ։ Ես չըգիտէի, որ «Մշակում» նախորոշած խմբի մէջ երկապառակութիւն է ընկել և Պետերբուրգի ուսանողները Արծրունուց զատւելով՝ խմբւել են Պ. Սիմէօնեանցի շուրջը, որ վերանորոգեն յոգնած և մեռած «Մեղունա» երկու շաբաթ անցած՝ «

մի նամակ ստացայ աիկին Սրբուհի Երիցեանի և օր. Գայիանէ Յովհաննիսիսեանի Յստորագրութեամբ, որով ինձ շնորհակալութիւն են յայտնում այն քաղցր տպաւորութեան համար, որ ստացել են իմ նոր վէպի ընթերցումից իրանց գրական երեկոյում։ Սրանից յետոյ դուրս եկաւ «Մեղուն» մի յացտարարութեամբ թէ Մեղւից բաժանորդները իրանց չստացած համարների փոխարէն կը ստանան Ազայեանցի «Նրկու քոյր» վէպը, որ արդէն մամուլի տակ է։ Սրանից երևաց, որ մեր լոթիքը՝ «մեղւական դառնալով» ինձ էլ ձգել են իրանց կարգը. մի քանի համարներից յետոյ նկատեցի, որ «Մեղւից խումբը բաւական անշնորհք է և իմ դաւանած ուղղութիւնը չունի բայց այլ ևս ուշ էր, Արծրունին ինձ համարեց մեղւական, այսինքն նրանց համակիր, նրանց ոգին և ուղղութիւնն ունեցող։ Ի հարկէ ևս մեղւական չէի, բայց ոչ էլ համակիր էի Արծրունու բնաւորութեան մի քանի գծերին։ Յաջող դիպւածի էի սպասում, որ ազատւեմ «Մեղունից» առանց կալելու Արծրունուն, և այդ դէպէքը շուտով վրայ հասաւ։ Արգար Յովհաննիսիսեանն սկսեց «Փորձ»-ը և ինձ իրան օգնական հրաւիրելով՝ ձգեց փորձանքի մէջ։ «Փորձ»-ի սպագայ խմբագիրը, երբ ես տեսաց առաջին անգամ, չափից դուրս լաւ տպաւորութիւն գործեց վրաս, դուցէ նրա համար, որ «Ժպիտը բերնից յած չէր գալիս, անմեղութեան էր նշան։ Եւ յիրաւի, թէև նրա այդ ժպիտը ստացական և շինովի էր, բայց ինքը դեռ ևս բաւական ան մեղ էր և անփորձ, բայց փորձի ու փորձանքի մէջ ընկնելու պատրաստակամ։ Դրա փիլիսոփայութիւնը գեռ ևս փորձի ու փորձանքների չորս կողմն էր պտղուում։ Եթէ արած փորձը յաջող էր դուրս գալիս, ասում էր ւլաւ պրծանք, իսկ եթէ անյաջող, ասում էր։ Ալաւ խրւեցակը։ Այսպէս շարունակ մի փորձից պրծնում և միւսի մէջ էր խրւում և ինքն իրան միմիթարում, ասելով՝ «Մաիլաս...»։ Հասուափոր «Փորձ»-ի առաջին հատորը նոր դուրս եկած ժամանակ, երբ իմ ընկեր Հայրապետ Ղուկասեանցը խնդրեց ինձ, որ միասին գնանք «Մշակ»-ի խմբագրատունը և մի յացտարարութիւն առանք Ալէքսանդրասրբի համար նոր ուսուցիչներ։ Հրաւիրելու, Արծրունին ինձ ընդունեց շատ սառը և մեր խնդիրը թողած, սկսեց ուղղակի «Փորձ»ից վրայ յարձակւել, մանաւանդ նրա լեզւի, որ ինձ խայթիւ — Խնչի մասին ուզում էք խօսեցէք, առաջի, բայց լեզւի

մասին մի խօսեք, որովհետեւ «Մշակ»-ի ամենաթերի կողմը հէնց նրա լեզուն է: Սրա վրայ Արծրունին բարկացաւ, յուղւեց, սկսեց հակածառել: Ես նոյնպէս բարկացայ և յարձակողական դիրք բռնեցի, որից սասարիկ վախեցաւ Արծրունին և սկսեց գրասեղանի արկղը բաց ու խուփ անել, հասկացնելով ինձ, որ այնտեղ ուեռլէր ունի, որ եթէ ես խփելու լինեմ իրան, ինքն էլ ունի զէնք: Վերջապէս մի կերպ դուրս եկայ առանց մնաս բարեի և «Փորձի» փորձանքիցն ազատուեցի: Սրա վրայ երկու օր չանցած՝ «Մշակ»-ը դուրս եկաւ մի առաջնորդող յօդւածով՝ «Ո՞վ է Ազայեանցը» վերնադրով: Այս յօդւածի մէջ իր բոլոր մաղձը թափում է վրաս և, լեզուի մէջ իմ տգիտութիւնը ցոյց տալու համար՝ այն փաստն է բերում, թէ Ազայեանցն այնքան տղէտ է, որ փոխանակ գրելու՝ «չ է գնում», գրում է՝ «չ ի գնում»: Այսուեղից ահա սկսեց մեր հռչակաւոր բանակուիը, թէ ինչնպէս պէտք է գրել յայտնի տեղերում՝ չէ, թէ չի:

Մինչեւ այդ ժամանակ ես երբէք չէի մտածել, թէ ինչպէս պէտք է գրել՝ չէ թէ չի, և հարկ էլ չունէի մտածելու, քանի որ ես մտածում և գրում եմ իմ մայրենի լեզով. թող տարակուսի նա, ով որ հայերէն չի մտածում և կապիկաբար հետեւում է սրան կամ նրան: Եւ որ իսելքը գլխին մարդը այսպիսի ցիմար բանի վրայ ու շաղբութիւն (լսմք.) կը գարձնէ: Եթէ երկուսն էլ գործածական են ժողովրդի մէջ, թէկուզ մէկը շատ և միւսը քիչ, եթէ գրողը պեղանտ չէ, կարող է անխափիր (լսմք.) գործ գնել՝ երկուսն էլ: Բայց այս պէս չէր մտածում Գ. Արծրունին: Երբ իմ պատասխանիս պատասխանելիք չունեցաւ, երբ տեսաւ, որ ինքն է սխալում և ոչ ես, փոխանակ իր սխալը շրովկելու, (որովհետեւ ասել էր, թէ Խ. Արովիւնցը, որ գործ էր ածում չի, նա ևս ունի չէ, որի համար բերել էր և մի սուտ օրինակ), սկսեց հայոցել անլուր հայոցանքով: Վերջերումն ինձ հասկացրեց, որ այդ ծայրայեղութիւնը իր արածը չէր, որ իր բարկութիւնից օգուտ էր քաղել իր մերձաւորներից մէկը: Ժամանակի ընթացքում, երբ Արծրունուց հեռացան կերծաւոր կատուները և մօտեցան աւելի ազնիւ մարդիկ, երբ «Մեղու»-ի ճանապով սկսեցին դնալ «Նոր-Դար» և «Արձագանք»-ը և միացեալ ուժով սկսեցին յարձակել վրաս, իսկ Արծրունին ինձ պաշտպանեց, ես էլ այդ բարութեան փոխարէն ինչ որ կարողացայ անել

նրա համար՝ արի, երբ ինձ համար անկախ և ազատ ասպարէզ ունէի «Աղբիւր»-ում և «Տարագյ-ում»: Այսու ա. Աննայնիւ լեզւի ինդրում մենք մինչև վերջ մնացինք անհաշտ, թէև այնքան միայն զիջողութիւն արաւ ինձ, որ իմ գրւածներս իմ ուղղագրութեամբ տպեց «Մշակ»-ումը:

## VIII

Խօսելով մեր գործունէութեան մասին Ալէքսանդրսպոլում, պէտք է մի քանի խօսք էլ նւիրել Ս. Բէգնազարեանցին, որ անմոռանալի ջանք է գործ դրել Ալէքսանդրապօլի դպրոցների բարեկարգութեան մասին:

Բէգնազարեանցը ինձ անծանօթ մի անձն չէր: Երբ ես գեռ ևս ձուլարանումն էի, որ գտնուում էր Հաւլաբարում, ամեն կիրակի առաւօտ գնում էի Խոջիվանքի եկեղեցին դպրութիւն անեռու: Ազգուղ դասումը կանգնած էլ լինում իմ հասակակից մի տղայ, միննոյն հագուստով ինչ որ ես ունէի, բայց շատ տիսուր և լնկճած դէմքով: Երբ որ ես երգում էի, նա էլ ձայն էր պահում: Ես սկսեցի հետը խօսել և խօսեցնել. և բանից երևաց, որ ուսում առնելու մեջ ցանկութիւն ունի, բայց նիւթական հնար չունի. սրա վրայ աւելանում է և հասակի մեծութիւնը (մօտ քսան տարեկան էր արդէն), որից խրանում են շատերը և չեն ընդունում, իսկ իր սիրու ոչ մի ուրիշ բանի չի կպշում, ուսման սէրը մի տեսակ ցաւ է դառել իր համար և դիշեր ցերեկ հալում, մաշում է իրան:

—Մի յուսահատիր, ասացի ես, —Ասուած ողորմած է: Նա որ այդ ցաւը ձգել է քո մէջ, դրանով արդէն գործի յաջողութեան հիմքը դրել է. Աստուծոյ ձգած սերմը անպատճ չի թնալ:

—Այս, ինչքան շնորհակալ եմ քեզանից, քո այդ քաղցր խօսքիդ համար, պատասխանեց Սարգիսը, և նրա աչքերը ջրակալւեցին:

Մեր Սարգիսը շատ խեղճ էր խօսում, մի տեսակ աղիողորմ կերպով, գլուխը ծռմռելով՝ կարծես ուզում էր լաց լինել մօրը կորցրած երեխայի նման: Սա այս իրան միայն յատուկ շարժմունքով վերջերում շատերի գութը շարժեց:

Սյսպէս ամեն կիրակի պատահում էի Սարգսին (այն ժամանակ Բէզնազարեան ազգանոուն ունենալը չըդիտէի) և մեր ծանօթութիւնը քանի գնում՝ բարեկամական էր դառնում: Բայց շուտով մենք Հաւլաբարից տեղափոխւեցինք քաղաք, ուր բացւեց տպարանը, և մի առժամանակ ես այլ ևս չըտեսաց իմ Սարգսին: Երկու թէ երեք ամիս անցած՝ մէկ օր սպատակեց ինձ Մէջանումը: Ինքը մօտեցաւ ինձ և սպատմեց աւելի ևս տիսուր եղանակով, թէ ինչպէս իրան յաջողւեց մանել Փափազեան վարդապետի մօտ իրբեւ փոքրաւոր-աշկերտ, քիչումիչ բան սովորեց, բայց վարդապետը գնաց Ղարաբաղ և իրան թողեց դարձեալ անձարացած:

—Սարգիս, ասացի, կուղե՞ս եկ ինձ մօտ տպարան, այսուեղ ես կաշխատեմ, որ զու համ արհեստ սովորես, համ էլ ուսում առնես:

—Ախ, այդ ինչ լաւ կը լինի, ուր էր թէ այդպէս մի լաւութիւն անէիր, ասաց Սարգիս ուրախանալով:

Միւս օրը մեր Սպագիսը եկաւ տպարան, բայց չը գիտեմ երկու թէ երեք օր մնաց միայն: Խեղճի ոտներն ուռան, և այն գնալն էր որ գնաց, էլ չերի աց:

Սրա վրայ անցաւ մօտ վեց տարի: Ես Պետերբուրգ էի և բնակում էի եկեղեցու գաւթումը: Մէկ օր գոնապանը եկաւ ինձ իմաց տըւաւ, թէ մէկ մարդ է եկել, ձեզ է հարցնում: Ես գնացի և գէմ ելաւ մի երիտասարդ, թուխ մօրուքով, արտասահմանի նորատարագ հագուստով և ասաց:

—Բարձր, պարոն Աղայեանց, եկել եմ ձեզ մօտ հիւր:

—Նատ ուրախ եմ, ասացի, համեցէք երթանք:

—Երեսում է, որ չըճանաչեցիք ինձ, ասաց:

—Այո, ասացի, ներեցէք, որ ծանօթս չէք գալիս: Սրա վրայ պարոնը բզաւեց.

—Ես Բէզնազարեանցն եմ, է... Սարգիս Բէզնազարեանցը, ինչպէս չէք ճանաչում:

—Համեցէք, համեցէք, ասացի, դեռ կը գնանք սենեակս, այնտեղ կը ճանաչեմ, զլիսի եմ ընկնում:

Երբոր տարայ սենեակս, բարկ ու բուրկը տեղաւորեցի, յետոյ մօտեցայ իրան և երեսին խոր նայելով ասացի.—Դէհ հիմա ասացէք տեսնեմ, դուք նր Բէզնազարեանցն էք, մենք երբ ենք իրար

տիսել և ճանաչել, որ հիմա չեմ կարողանում միտս բերել: Բէզնազարեանցը ծիծաղեց և էլի բղաւեց զազախեցու եղանակով:

—Բա միտրդ չեմ, ես էն Սարգիսն եմ, որ դու տարար տպարան, որ քո արհեստը սովորեցնես, բայց ոտներս ուռաւ, էլ չըկարացի գրաշար դառնամ:

Հա..., հիմա իմացայ... Բայց ալսըր էն Սարգիսն ու էս Սարգիսդ իսկի իրար նման չէք. ինչպէս էլաւ, որ էսպէս փոխեցիր:

Այսուեղ Բէզնազարեանցն սկսեց պատմել իր զլիսով անցած վերջին դէպքերը, թէ ինչպէս մի բարերարուհի է գտնել և նրա ծախքով մտել Ներսիսեան դպրոց, ուր նրան ընդունել են նախապատրաստականում, բայց ինքը իր ջանասիրութիւմը իւրաքանչիւր տարի երկու դասարան փոխելով չօրս տարում աւարտել է դպրոցի ամբողջ դասընթացը և ստացել փառաւոր վկացական, որի շնորհիւ դտել է մի այլ բարերար, որ նրան ուղարկել է Մոսկւա, ուր սկսել է պատրաստել, որ մտնէ համալսարան, բայց այնուեղի կլիմացին չըդիմանալով, բժիշկների խորհրդով և իր բարերարի հրամանով գնացել է Գերմանիա, բայց այդ ժամանակ բարերարը վախճանել է, ժառանգներն ընդհատել են օժանդակութիւնը: Այժմ՝ Գերմանիացից է գալիս և մտադիր է հայրենիք գնալ, միայն ճանապի ծախսը չունի:

—Նատ լաւ, ասացի, շատ ուրախ եմ: Այսուեղ ճանապի ծախսը կը գոնենք, բայց աւելի լաւ կը լինէր, որ մի նոր բարերար գտնեէր և քեզ կրկին ուղարկէր Գերմանիա յատկապէս մանկավարժութիւն սովորելու:

Ես այս ասացի իբրև մի ցանկութիւն միայն, հետեւելով ժամանակակից մոդային: Նա ինձ մօտ մնաց մէկ թէ երկու շաբաթ միայն, և մէկ օր էլ եկաւ և աւետեց ինձ, ասելով.—դիտե՞ս, իմ Գերմանիա գնալը յաջողում է: Այսուեղի ուսանողներն ուղում են իրանց հաշւով ուղարկել, որ երթամբ մանկավարժութիւն սովորեմ; միայն ցանկանում են, որ Մոսկւայի հայ ուսանողներն էլ մասնակցեն, և արդէն դրել են նրանց:

Մոսկւայի ուսանողները ոչ միայն չօգնեցին, այլ և վատաբանեցին Բէզնազարեանցին և կասկած ձգեցին Պետերբուրգի ուսանող-

ների մէջ էլ: Զարահոգութիւնն աշկարա էր: Բէզնազարեանցը գնաց Մոսկւա, ամօթահար արաւ իր չարախօսներին և վերադարձաւ Պետքրուրդ իր վարկը վերականգնած: Եղեանցը միջնորդեց մի քանի վաճառականների և Սանասարեանցին, ինքն էլ նրանց հետ միանալով՝ հաւաքական օժանդակութեամբ Բէզնազարեանցին ուղարկեցին Զւիցէրիս Քիւսնախտի ուսուցչական սեմինարիան: Եղեանցը առանձին հսկողութիւն ունէր նրա ուսման յառաջադիմութեան վրայ, թղթակցում էր դպրոցի տեսչի հետ և միշտ լաւ կողմից էր սաանում աւելեկութիւնը: Ահա այսաեղ իր մանկավարժական ուսումն աւարտեց Բէզնազարեանցը և դիպլոմով վերադարձաւ Պետքրուրդ 1870 թւականին: Այսաեղ էլ ցանկութիւն ունէր մանել համալսարան, բայց այս բանը դուք չեկաւ Եղեանցին և նրան ուղարկեցին Ալեքսանդրապոլ, Ա. Բաբայեանցի առաջարկութեամբ:

Բէզնազարեանցը մի առանձին տաղանդ չունի, ինչ որ է՝ իր անխոնջ աշխատութեանն է պարուական: Դպրոցները նրան միայն պատապարել են, իսկ ուսումն ինքն է ձեռք բերել իր ժրաջան ինքնոգնութեամբը: Ալեքսանդրապոլից յետոյ, նա մի առժամանակ գնաց Օդեսա, մօտ առա տարի տեսչութիւն արաւ Երևանի թեմական դպրանոցում, յետոյ Ներսիսիան դպրանոցում եղաւ թէ ուսուցիչ և թէ անսուչ: Իբրև ուսուցիչ, պատկառելի և մերթ նաև երկիւղալի էր աշակերտաց համար: Ներքին սէրը դրսի հաստ կեղեցից բղիսել չէր կարողանում: Ուսուցանում էր որպէս արւեստ, կամ ինչպէս կասեն՝ արւեստի բոլոր կանոնների համեմատ, բայց ոչ իբրև Մեսրոպ, որ մէջ իբրև զարւեստ ուսուցանէր, այլ որպէս զնոպի առաքելաբար աշակերտացն տայցք:

## IX

Հինգ տարու չափ մնացի ես Ալեքսանդրապոլում և շատ գոհ էի վիճակիցս, սիրւած, յարդւած և մսիթարւած էի ամեն կողմից: Բայց ամեն ինչ թէ բնութեան և թէ կեսնքի մէջ պարբերական է: Լաւն ու վատը, զառն ու քաղցրը, ուրախութիւնն ու տիրութիւնը, յաջողութիւնն ու անյաջողութիւնը շարունակ յաջորդում են միմեանց, ինչպէս տարւայ չորս եղանակները և գիշերն ու ցերեկը:

Սրա վրա շատ շանցաւ երկոքին զաւակներս մեռան—Սոնան և Հայկս։ Սարսափելի բան է առաջին կոկիծը որդեկորոյս ծնողի համար։ Մօր վիշտը շատ և շատ խոր էր, բայց սիրոսն էր գցում և հալում, մաշտում, իսկ ես դռուում էի զազանի պէս, որ դուքս մզեմ սրտիս կոկիծը։ Ես յետոյ թեթևանում էի, իսկ նա ծանրանում էր։

Ես սկսեցի նիհարել, ձայնս կտրւեց։ Ամուսինս աւելի վատ վիճակի մէջ ընկաւ թէ ֆիզիկապէս և թէ հոգեպէս։ Նրան շուտ ուղարկեցի Թիֆլիս, իսկ ես հրաւիրեցի օր։ Անգլիցեանին օրիորդաց դպրոցի համար։ սրա հետ ամուսնացաւ իմ բարեկամ Ա. Եզեկեանցը։ Սրանից յետոյ ես հեռացայ Ալեքսանդրապոլից։ Բէգնազարեանցն արդէն հեռացել էր ինձանից մի տարի առաջ։ Մենք հեռացանք, բայց դպրոցները բարեկարդ վիճակի մէջ և բարեխիզգ ուսուցիչների ձեռքում թողեցինք։

Ալեքսանդրապոլից ես գնացի Թիֆլիս նորից վերադառնալու յոյսով, բայց թէ իմ և թէ ամուսնոյս տկարութիւնը պահանջում էր Թիֆլիս մնալ։ Այս ժամանակ ահա Արգար Յովհաննիսեանը հրաւիրեց ինձ օգնելու իր «Փորձ»-ին, որ դեռ նոր պիտի սկսէր։ Մոտ տարի ու կէս մնացի ես «Փորձ»-ի խմբագրատանը, բայց ոչ մի բան չըգրեցի ես «Փորձ»-ի համար բացի մի թարգմանութիւնից «Օգտակար-Ուսուցիչ» վերնագրով։ Զըգրեցի, որովհետև գրածիս գրաքնիչը Փորձաքննիչ-մենտոր Եւանգուլեանցն էր, որի սիրած ուղղութեամբ ես բան գրել կարող չէի, ինչպէս դրս փորձն արի մի քանի գրածներ ցոյց տալով։ Կարծելով, որ սրբագրութիւնն ինձ շատ է զրազեցնում, Արգարը մի օգնական էլ տըւեց ինձ, բայց այդ փորձն ևս անյաջող եղաւ, ես դարձեալ ոչինչ չըկարողացայ գրել։ Փորձում ոչինչ չըգրելով, պատահում էր սակայն, որ ինքս ինձ համար մի բան գրում և պահում էի։ Որքան սիրելի էր ինձ համար Արգարը, որ ամենայն հոգւով աշխատում էր ինձ սերպահած պահել, ոչինչ չէր խնայում, ոչ փող և ոչ պատիւ, բայց այդ շրջանն ինձ համար ատելի և անտանելի էր, մանաւանդ աշխատակիցներից մի քանիսը, որոնք տղրուկի պէս ծծում էին Արգարին և միւնոյն ժամանակ շարունակ իմ տակը փորում։ Դրանք մի կողմից քծնում էին Արգարին, միւս կողմից Արծրունուն ու տանող բերողի

պաշտօն էին կատարում: Ես չեի կարող երկար մնալ այս անտանելի վիճակում: Ինքս ինդրեցի Արգարին, որ ինձ ազատ կացուցանէ: — իմ խղճմտանքս տանջւում է, ասացի, փող եմ ստանում, բացց ոչինչ չեմ շինում: Փոխանակ ինձ ուժ հարիւր մանէթ տալու մի ուրիշին կարող էք չորս հարիւր մանէթով պահել իմ տեղու Արդարն ինքն զգաց, որ սոխակը վանդակի մէջ կարող չէ երգել, տեսաւ փորձով, որ ես պատւէրով բան չեմ կարող գրել, որ ես էլ իմ կապրիզներն ունեմ, որ ինձ հարկաւոր է անսպազման ազատութիւնն և անկախութիւնն և ազատեց ինձ իր «Փորձ»-ից: Այս բանը պատահեց 1878 թւի սեպտեմբերին, եթէ չեմ սխալում:

Այդ տարին ես գնացի Երևան ուսուցչութեան, իսկ Տաֆֆին Ագուլիս նոյնպէս ուսուցչութեան: Երևանի թեմական դպրոցի տեսուչը նէղնազարեանցն էր, Որուրէն Զալալեանցն էլ հոգաբարձու էր: Երկու մտերիմ բարեկամներս ինձ ընդունեցին իբրև գերութիւնից ազատուածի և սկսեցին սփոփել և միմիթարել:

Գէորգ կաթողիկոսն իմանալով իմ Երևան գալս, Մանկունու նամակով կանչեց մօռը և առաջարկեց, որ կրկին յանձն առնեմ իմ առաջւաց պաշտօնս, այն է՝ «Արարատ»-ի խմբագրութիւնը: Այս բանն ինձ համար բոլորովին անսպասելի էր: Արդէն ճեմարան կար, ուսուցիչներ կային և անսուչն էլ Այւազովսկին էր: Իմ պէտքն ինչու պիտի զգացւէր այլ ես:

— Ինչ անցք որ անցել է ձեր երկուսիդ (իմ և Մանկունու) մէջ, ասաց, պէտք է մնուացութեան տաք: Այն ժամանակ երկուքդ ալ տղաք էիք, իսկ հիմա հասունցել էք: Այս գործի համար բւզմէ յարմարագոյնը չունեմ այս տան մէջ:

Մանկունին մօսս կանգնած էր, երբ հետո խօսում էր Վեհափառը, և հէնց իր թելադրութեամբ էլ պէտք է հրաւիրւած լինէի, թէսէտ ինքն այդ շասաց, այլ թէ՝ փշղէ, մարդս քեզի կուզէ:

Մանկունու վրայ մատնացոյց լինելով՝ շարունակեց Վեհափառը.

Սա պիտի երթայ... մեծ մարդ կը համարեն զինքը... Թող երթայ, հոգ չե...

Այստեղ շատ բան ասեց Վեհափառը՝ ցաւած սրաից բխղամձ:

— Ես պատրաստ եմ, ասացի, Վեհափառ Տէր, Զեր հրամանը կատարելու: Թէ ես և թէ հոգաբարձուք ձեր ծառաներն ենք,

կը հրամայէք, նրանք իմ տեղ մի ուրիշին կը հրաւիրեն և ինձ կարձակեն:

— Նատ ասլրես, աղաս... Վարձառութեանդ համար հոգ չընես-օրինաւոր ռոճիկ կունենաս և ամենայն յարմարութիւնն ես դեռ կաշխատեմ, որ սա չերթայ, իսկ եթէ գնալու եղաւ, քեզ իմաց կուտանք:

Այս մի նախապատրաստութիւն էր, որ Վեհափառն անում էր, որ երբ Մանկունունուն հեռացնեն, ինձ հրաւիրէ. բայց բանն այն-պէս եկաւ, որ Մանկունին մնաց իր տեղը: Այսու ամենայնիւ այս ինքն ըստ ինքեան չնշին դէպքը ինձ համար գործնական և բարոյական օգուտ ունեցաւ: Իմ վարկը բարձրացաւ հոգեռականութեան առջև, մանաւանդ միաբանութեան և առաջնորդների, իսկ այս մեծ նշանակութիւն ունէր իմ ապագայ դործունէութեան համար:

Ներսէս եպիսկոպոս Խուղավերդեանը մեծ ճաշկերոյթ տրւեց Գայանէի վանքում ի պատիւ իր նախկին բարեկամի, որ և մի համակրական ցոյց էր առ Նորին Վեհափառութեան քաղցր որամազրութիւնը դէսի ինձ: Ինչ պէտք է անես, այսպէս է աշխարհիս կենցաղավարութիւնը: Կան դէպքեր և վիճակներ, ուր մարդիկ չեն կաշողանում սէր ցոյց տալ իրանց սիրածին և ատելութիւն իրանց ատածին: Այս տողերը զրելիս ինքս այսպիսի մի անելանելի վիճակի մէջ եմ գտնւում, որի մասին կը գրւի մի ուրիշ անդամ:

Երեւան հանելուց քիչ յետոյ Արքարը եկաւ Սանասարեանցի հետո Սանասարեանցը եկել էր քրոջն այցելութեան, իսկ Արքարը Բարեգործական Ընկերութեան կողմից ուղարկւած էր գերեվարւած ալաշկերտցիներին նիւթական նորաստ տալու համար: Ես շատ ուրախացաց թէ մէկի և թէ միւսի գալստեան համար: Արքարն ինձ վեր առաւ հետը ու միասին գնացինք այցելութեան գաղթական-ներին, որոնք ցրւած էին Երեւանի զանազան գիւղերում: Մի երեկոյ հասանք Դաւալու և իջանք փոստի իջևանումը: Իջևանի պահողը ծերունի Ամիրխանեանն էր, որ մի կոպիտ և դիւզ խօսող մարդ էր: Երբ կարգացել էր Արքարի ուղեգիրը ու դլիսի ընկել, որ նա իրան ծանօթ բժշկապետ Յովհաննիսեանի որդին էր, եկաւ ուղղակի երեսին կանգնեց և մի դիւզ հարցմունք արաւ, որից Արքարս սաստիկ վիրաւորւեց և հրամայեց, որ կառքը լծել տայ:

— Հեռանանք, ասաց ինձ, այս լիմար տեղից, և այսուղ չեմ կարող դիշերել:

— Իաց արդէն ժամի ինն է, ասացի, և ձանփէքը վտանգաւոր: Եթէ չես վախենալ, զնանք Բաշնորաշէն, մեր բարեկամ բժիշկ Քաջբերունուն հիւր:

— Գնանք, ասաց, ես եմ վախենում: «Ես հաւատում եմ իմ աստղին»:

Ճշմարիտ որ Արգարի աստղն այդ ժամանակ փայլում էր Թիֆլիսի հորիզոնի վրայ այնպէս վառ, ինչպէս ոչոքինը: Ոչ մէկս զէնք չունէինք, Սանասարեանի րէւոլւէրն էինք վերցրել հետներս: Շատ էլ մութն էր: Մօտ կէս դիշերին մի ամայի անապատի մէջ էինք, ուր և հանդիպեցինք մի խումբ թուրք ձիւաւորների, որոնք ճանփից դուրս գալով հեռւից կանչեցին մեր կառապանին, թէ ովքեր ենք մենք:

— Գնացէք ձեր ճանապարհը, պատասխանեց կառապանը, սրանք ձեր ուղած մարդկանցից չեն:

— Ի՞նչ են ասում, հարցրեց Արգարը:

— Ոչինչ, ասացի, պահապաններ են, մեր ապահովութեան հոգս են քաշում:

Կառապանը թուցրեց մեզ և երբ հասանք Բաշնորաշէն, ասացի. Շաւ պրծանք՝ աւաղակների ձեռից, հիմա հաւատում եմ քո աստղին:

Գիշերւայ ժամի մէկին իջանք Քաջբերունու մօտ: Արգարն անձամբ ծանօթ չէր բժշկին, նոր ծանօթացաւ իր տաղանդաւոր աշխատակցի հետ և մի թելթե ընթրիքից յետոց իսկոյն քնեց: Մենք չըքնեցինք մինչև լոյս և չիմացանք էլ մեր փոխապարձ հաղորդելիքը: Որքան տարբերութիւն կայ բնական և շինովի մարդկանց մէջ. որքան տարբերութիւն և նրանց վիճակի մէջ: Քաջբերունու պէս մարդիկ ծածկւած են մնում աննշան թուրքական զիւղերում, իսկ շինովի անշնորհքները մեծ քաղաքներում իրանք իրանց ժողովրդի զեկավարող են հանդիսացնում: Փողն ու դիրքը ապօրինի կերպով յափշտակում է հանճարների ալաշտօնը ու ժողովրդին զրկում հարազատ զեկավարներից:

— Ի՞նչպէս մարդ է քո Արգարը, հարցրեց Գարրիկը:

— Ի՞նչ ասեմ, զեռ իսկական մարդ է, ուզում է մարդ դառնալ, մարդ բնական և ինքնուրոյն. բայց ամեն տողի վրայ տասն անգամ յօրանջում է, բան չի դուրս դալիս գլխիցը: Եւ որովհետեւ զրել ուզում է միայն փայլելու համար և ոչ թէ իր զգացմունքների ծանրութիւնից թեթևանալու, որ չունի, այս պատճառով փայլուն փրազներ է հաւաքում զանազան տեղերից, դիմում է փողմակի միջոցների. գրել է տալիս ուրիշներին այնպէս, որ կարծւի թէ ինքն է գրել և տպագրում է անստորադիր:

— Այն ուսանողների նման, որոնց փոխանակ ուրիշներն են քննութիւն տալիս...

Ուզիղ այլպէս...

— Ի՞նչ է նպատակը, ձգտումը:

— Զեռք բերել բարձր դիրք, խելօք մարդու համբաւ և հեղինակութիւն, որ շատերի համար ակնածելի լինի, շատերը կարօտ լինեն իր խնամակալութեանը և հովանաւորութեանը, ազգացին ամեն տեսակ գործ և գործի: իր ձեռքումն ունենաց, որ ում ուզենայներս թողնի, ում չուզենաց՝ դուրս մղէ:

— Աւրեմն շատ վտանգաւ որ մարդ է դա: Սա մի բոլորովին նոր տիպ է մեր մէջ:

— Այս, նոր, բայց զեռ լաւ չի կազմակերպւած: Սա կարող է դառնալ մի տեսակ դիքտատոր, եթէ խելքը գլխին պահի, մի քիչ համեստ և հեռատես լինի: Սակացն սրա մէջ ամեն ինչ առ երես է, մէջը դատարկ է, փուչ է:

Արգարից յետոյ անցանք այլ առարկաների և անցքերի, որոնք մեր սրտին աւելի մօտիկ էին: Խօսեցինք այնպիսի բաների վրայ, որոնց մասին միայն խօսում են, բայց չեն գրում: Մօտ երեք տարի էր անցել, ինչ որ չէինք տեսել միմեանց, բայց շատ ու շատ բաներ էր անցել երկուսին դլխովն էլ, պէտք էր միմեանց հաշիւ տացինք երես առ երես:

Միւս օրը յետ դառնանք դէպի Երեան և ճանապարհին՝ թէ գնալիս և թէ վերադարձին՝ մեր խօսակցութեան նիւթը գլխաւորապէս զանազան անձնաւորութիւններ էին, որոնց գովարանում կամ վատարանում էինք: Մեր վատարանութեանն ամենից շատ ենթարկում էր Պետրոսը (Սիմեոնեանց), որին հեռացնելը ներսիսեան դըպ-

բոցից մի անհրաժեշտ բարեգործութիւն էինք համարում։ Արգարը պատմում էր ուրիշի պատմածները՝ նրա մասին, իսկ ես պատմում էի իմ տեսածը և դիտածը։ Ես վատաքանում էի և Արգարի բարեկամներին՝ Եւանդուլեանցին, Պալասանեանին, Բարխուդարեանցին, պատմում էի թէ ինչպիսի փշեր էին գրանք ինձ համար «Փորձ»-ի խմբագրատան մէջ։ Արգարն էլ համակարծիք էր ինձ հետ բայց Արգարը տարէց տարի նորանոր փորձեր սկսեց անել, իր «Փորձ»-ն «Արձագանք» շինեց և նրան էլ ենթարկեց զանազան փորձերի մինը քան զմիւն անցածող։ Տարէց տարի փոխւեց և ինքը, և ամենայն բանի վրայ սկսեց նայել այնպէս, ինչպէս տպաւորւում է առարկան աչքում, այսինքն թշ արս Սկսեց գովել և պաշտպանել իր առածներին, պախարակել ու հալածել իր սիրածներին։ Երջապատելով իրան պնդերես և աներես մարդկանցով, հացկատակ պարսաւագիրներով, դրանով իր թերթն ուզեց հետաքրքրական կացուցանել, կարգացողների թիւ գրաւել, բայց ընդհակառակին ացդ ճանփով նա հասաւ մինչև «Նոր-Դար»-ի ստորոտը։ Փոխանակ գնալու դարիվեր, գլորւեց դարիվայր։

Երեանում ես մեացի ութ ամիս։ Այդ տարին պատահեց ճեմարանի առաջին խոռվութիւնը, որից յետոյ Վեհափառը սառցը իր յարաբերութիւնը Այւազովսկու հետ, թէպէտ մեղաւորը միայն նա չէր, որ Թիվիլիսումն առաջնորդութիւն և Ճեմարանում տեսչութիւն էր անում միաժամանակ, այլ և Վեհարանը, որ ամեն չնչին բանի մէջ խառնւում և խառնակւմ էր ամեն ին։ Այդ միջոցին ես ու Բէդնազարեանցը գնացինք Եջմիածին, ուր Բէդնազարեանցը մնաց, որ մասնակցէ անցքի քննութեանը, իսկ ես Մալիսասեանցին միախթարելով՝ որպէս նախկին ընդունակ աշակերտիս, վերադարձայ Երևան։ Այդ տարին Մատթէոս եպիսկոպոս Խղմիրլեանը եկաւ կաթողիկոսի մօտ կարեւոր գործով, բայց թուրքասիրութեան հանդիպելով՝ յետ դարձաւ ճեռնունայն։ Ամեն իշխանաւոր գրաւչութեան մի ջոկ տաքտիկա ունի։ Գէորգ կաթողիկոսի տաքտիկան թուրքասիրութիւնն էր, որով խոհեմ և խելօք մարդու անուն էր վաստա-

կում; Իզմիրլեանցին այցելեցինք ես ու Բէդնսզարեանցը և մեզ վրայ խելահաս և ծանրախոն մարդու տպաւորութիւն թողեց:

Դպրանոցում ես դասեր էի վերցրել նախակրթարանում և մէկ էլ վերջին դասատանը: Ամեն տեղ այսպէս էի անում ես, դպրոցի երկու ծագրերն էի վերցնում, — ներս մտնողներին ընդունում էի և ուղեորում դէպի միւս դասարանները, դուրս եկողներին էլ ճանապարհ ձգում դէպի կեանք՝ ինքնակրթութեան ողի ներշնչելով նրանց մէջ: Նախակրթարանում ես ունէի ութսունաշափ աշակերտ, և այդքան հոգին սովորում էին իրեւ մի հոգի՝ տաքտով ու խմբով: Երևանի երեխեքը ֆիզիքապէս թոյլ լինելով աւելի զբաղեցնում էի նրանց մարմնամարզունքի վրայ, մանաւանդ խմբովին և տակտով աշխատելու վրայ: Ամբողջ դասատունը գործում էր իրեւ մի լարած ժամացոյց: Գրել կարդալում այնքան վարժւեցին, որ ամեն թելադրութիւն գրում էին անսխալ, դրում էին և փոքրիկ շարադրութիւններ, մեծ մասամբ իրանց գիտցած հէքիաթներից: Նատերն էին ցոյց տալիս տաղանդի նշան: Այլոտեղ ես իմ դասատութեան բոլոր թերի և պակաս կողմերը լրացրի, և կարող էի, եթե տեղը ներէր, ոչ թէ ութսուն հոգու, այլ և հարիւտառ հոգու հետ պարապել իրեւ մի անհատի հետ ու առաւելն երեք ամսում սովորեցնել օրինաւոր գրել-կարդալ Շատերը ենթադրում էին, որ տւած արդիւնքի մէջ մի անբացադրելի ձեռնածութիւն կայ, թէ դա աւելի մարզմունքի և մեքենականութեան արդիւնք է: Ըստհոգառակը իմ գործի յաջողութեան միակ գաղանիքը այն էր, որ բաց էի անում երեխացոյց աւաջե գրել կարդալու գաղտնիքը, նրա բուն էութիւնը զննելի և շօշափելի կացուցանում: Իմ օգնութեամբ երեխեքն իրանք էին անում գրերի գիւտը, նախ գրում և ապա կարդում էին. Երկուսի մէջ էլ գլխաւորը գիտակցութիւնն էր, գիտէին, թէ ինչ են անում և ինչու համար: Խնչպէս ամեն մի շօշափելի առարկայ զննելի ենք կացուցանում, ցոյց ենք տալիս նրա ձեւը, մեծութիւնը, գործը, զանազան մասերը, այսպէս զննելի էինք կացուցանում զրի ու նրա կարդալու էութիւնը: Երեխեքս գիտեին այնպիսի դաղոնիքներ, որոնք անցայտ են շատ վարժապետների: Այսպէս պատրաստւած երեխան, թէկուզ մի տարուց յետով դուրս

դայ դպրոցից, անկարող է շըշարունակել իր ինքնուսուցումը։ Լինելով մի փոքրիկ Մեսրոպ, հասակի հետ կամի նրա գրագիտութիւնը։ Այս մասին ես գրել եմ «Վարժարան» ամսագրի մէջ՝ ընդդէմ Մանդինեանցի իմ կարծիքով բժացուցիչ մեթոդի։

Երևան ես ընկայ անակնկալ կերպով։ Մաքումս դրել էի «Փորձ»-ից հեռանալ և անգործ շըմնալ, դրեցի Բէգնազարեանցին իմ մտադրութիւնը և խնդրեցի, որ ինձ համար տեղ պահէ մինչև ինձանից բացասութիւն չառանայ, թէկուզ ուշ լինի այդ բացասութիւնը։ Ուուրէնը բաւական ծիծաղել էր իմ այս պայմանի վրայ և տեղ էր. «ինչ անենք, մեր Ղազարն է, պէտք է տղամաննք, տեսնենք երբ է բարեհաճում գալ»։ Այսպիսի արտօնութիւն միայն ինձ կարող էր տալ խստապահանջ տեսուչ Բէգնազարեանցը, զիսինալով, որ ես թէկուզ տարւայ կիսին զնամ, էլի և տարւայ գործ կը շինեմ։ Բայց ես գնացի դպրոցական տարւայ սկզբին և վերջումն էլ բոլորովին զո՞ւ մնացի վիճակիցս, այլ ևս միտք չունեինք հեռանալ Երևանից, բայց մի անակնկալ հրաւէր անհրաժեշտ դարձրեց իմ հեռանալը։ Արիստակէս վարդապետ Սեղրակեանը, որ կառավարիչ էր Ղարաբաղի թեմի, անձամբ խօսեց ինձ ու Բէգնազարեանցի հետ, շատ բաներ հաղորդեց և ցոյց տւեց իմ Ղարաբաղ զնալու կարեռութիւնը։ Ես ու Բէգնազարեանցը այս մասին երկար մտածելուց յետոյ, տեսանք, որ հայր սուրբի մտադրութիւնը կատարեալ անհրաժեշտ է ընդհանուր գործի համար։ Մեզ պէտք են ամեն նահատակութիւն յանձն առնող դպրոցական առաքեալներ։ Ալեքսադրապում մեր ձգած հիմքը շարունակում էր հաստատուն մնալ շնորհիւ Հայրապետ Ղուկասեանցի տոկուն աշխատութեան, Երևանն էլ արդէն կապւեց նրա հետ մի ուղղութեամբ, պէտք էր Ղարաբաղն էլ միացնել նրանց հետ, որ ամեն տեղ մի ուղղութիւն, մի հոգի լինի, մի նպատակի դիմէի ու միեւոյն ծրագիրն ունենայ, որ մշակել էինք արդէն Ալեքսանդրապումը։ Ահա այս նպատակով ես թողեցի Երևանը և գնացի Շուշի։

(Կը շարունակւ)